ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/08

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից 22.01.2018թ. ներկայացված բողոքը և «Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից 25.01.2018թ. ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/08 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 22.01.2018թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև սահմանված եռօրյա ժամկետում Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջված հավելված 6-ը և 6.1-ը: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերը որակվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող և տրամադրվել է ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված ժամկետը՝ անհամապատասխանությունները շտկելու համար: Ընկերությունը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է նշված հավելվածները՝ անհրաժեշտ շտկումներով հանդերձ, միաժամանակ տրամադրելով բացատրություն առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը՝ առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու հիմնավորմամբ: Ընկերությունը նման որոշման հետ համաձայն չէ և գտնում է, որ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի իրավունքները:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 1-ին մասը:

Պատվիրատուն հրավերի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում սահմանել է հետևյալը. «Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մx14սմ չափերի ստերիլ բինտեր»: Բինտը լայնքից և երկարությունից բացի ունենում է այլ կարևոր ցուցանիշներ, որոնցից է խտության ցուցանիշը: Այս ցուցանիշը հստակ թվով սահմանելու փոխարեն Պատվիրատուն բնութագրում հղում է կատարել ГОСТ 1172-93 պահանջներին, որի 1.2.1 կետի համաձայն բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն՝ ГОСТ 9412-ի, կամ սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական թանզիֆից: Դա նշանակում է, որ բինտի պատրաստման համար անհրաժեշտ թանզիֆի, հետևաբար նաև բինտի խտությունը կարող է լինել 28+/-2 մինչև 36+/-2:

Այդ տարաբնույթ մեկնաբանության հստակեցման նպատակով Ընկերությունը սահմանված ժամկետում պարզաբանման խնդրանքով դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ քարտուղարի էլեկտրոնային փոստին հարցում ուղարկելու միջոցով, սակայն պատասխան չի ստացվել, ուստի քանի որ ներկայացված ГОUS-երի համաձայն խտությունը կարող է լինել 28+/-2 մինչև 36+/-2, Ընկերությունը հայտով առաջարկել է

հնարավոր նվազագույն տարբերակը: Այդ որոշման համար հիմք է հանդիսացել նաև նախորդ տարիների փորձը, որով Ընկերությունը նույն Պատվիրատուին մատակարարել է 28բ/ք.մ խտության ապրանք և դա համարվել է ընդունելի Պատվիրատուի կողմից: Այնուամենայնիվ, «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն հայտի գնային առաջարկում ապրանքի անվանման հետ միասին հստակ ներկայացրել է առաջարկվող ապրանքի խտությունը՝ նշելով 28գ/ք.մ ցուցանիշը: Գնումների մասին << օրենսդրության համաձայն՝ մասնակիցները կարող են ներկայացնել հրավերով նախատեսվածից բացի այլ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև կարող են տեղեկությունները ներկայացնել հրավերով սահմանված օրինակելի ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով վավերապայմանները:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն հավելված 4-ից բացի հավելված 5-ով փաստացի Պատվիրատուին ներկայացրել է տեղեկություն, համաձայն որի Պատվիրատուն կամ պետք է մերժեր գնային առաջարկը, եթե այդ ցուցանիշը համարում է անընդունելի, կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պարագայում այդ ցուցանիշը պարտավոր էր համարել ընդունելի: Պատվիրատուի կողմից հիմք չեն ընդունվել ոչ գնային առաջարկով ներկայացված տեղեկությունները, ոչ էլ հետագայում Ընկերության ներկայացրած բացատրությունը ԳՕՍՏ-ի և տեխնիկական բնութագրի մեկնաբանության վերաբերյալ, արդյունքում հայտը մերժվել է և խախտվել է Ընկերության իրավունքները:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքներից երևում է, որ տեխնիկական բնութագրի նույն տարաբնույթ մեկնաբանության հետևանքով մերժվել է նաև սկզբում երկրորդ տեղը (հետագայում նաև՝ առաջին) զբաղեցրած մասնակցի հայտը: Դա ևս փաստում է այն մասին, որ հրավերի տեխնիկական բնութագիրը տալիս է տարաբնույթ մեկնաբանության առիթ՝ խախտելով ընթացակարգի մրցակցային, թափանցիկ և համաչափ կազմակերպման վերաբերյալ Օրենքի սկզբունքը:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն նշել է, որ Ընկերությունն ապահովել է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջները, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից սխալ բնութագրերով հրավեր հաստատելը հանգեցրել է հայտերի անհիմն մերժմանը՝ խախտելով մասնակիցների իրավունքները:

Պատվիրատուի նման մոտեցմամբ մասնակիցների հայտերը մերժելը հանգեցնում է մրցակցության սահմանափակման, և ընթացակարգի շրջանակներում անհիմն խոչընդոտներ է առաջացնում: Ընկերությունն ունի հնարավորություն առաջարկելու 28+/-2 մինչև 36+/-2 ցուցանիշներով բժշկական բինտ, ընդ որում՝ մրցակցային շահավետ գներով և հստակ տեխնիկական բնութագրերով հրավեր հրապարակվելու դեպքում պատրաստ է ստանձնել նման պարտավորություն:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Չեղյալ համարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ ընթացակարգի հրավերը հաստատելու մասին 22.11.2017թ. նիստի թիվ 2 որոշումը՝ 3-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև դրանից հետո նշված չափաբաժնի մասով հայտերի գնահատման վերաբերյալ կայացված բոլոր որոշումները:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 3-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն ի լրումն 22.01.2018թ. ներկայացրած բողոքի 29.01.2018թ. գրությամբ ներկայացրել է Ռուսաստանի Դաշնությունում գործող «ԽԲԿ «Նավտեքս» ՍՊԸ-ի կողմից արտադրվող բժշկական նշանակության թանզիֆի գրանցման հավաստագիրը, թանզիֆի համապատասխանության հայտարարագիրը, 28գ/խ.մ. խտության թանզիֆի լաբորատոր փորձաքնության անձնագիրը և հայտնել է, որ թանզիֆի լաբորատոր փորձաքնության անձնագրում հստակ երևում է, որ 28գ/խ.մ թանզիֆի արտիկուլը 6498/22 է, այնուհետև համապատասխանության հայտարարագրով հստակ երևում է, որ նույն 6498/22 արտիկուլով թանզիֆը համապատասխանում է ԳՈՍՏ 9412-93-ի բժշկական թանզիֆի ընդհանուր տեխնիկական պահանջներին: Այսինքն Ընկերության կողմից ներկայացված նույն 28գ/խ.մ. խտության թանզիֆը համապատասխանում է ԳՈՍՏ 9412-93–ի պահանջներին:

Չնայած այս ամենին, Հայաստանի Հանրապետությունը չի ստորագրել այնպիսի համաձայնագիր, որով ընդունվում են ՌԴ գոստերը, միաժամանակ ինքն էլ չի ընդունել նման կոդերով ԳՈՍՏ-եր:

Ստացվում է, որ Պատվիրատուն հրավերով սահմանել է մի ԳՈՍՏ՝ 1172-93-ը, որում առկա է այլընտրանքային մեկնաբանություն (կամ, սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական թանզիֆից), ինչպես նաև հղում մեկ այլ ԳՈՍՏ-ի՝ 9412-93-ին, և այդ ԳՈՍՏ-երը ընդունված չեն ՀՀ-ում, այնուամենայնիվ Ընկերության կողմից ներկայացվել է ապրանք, որը համապատասխանում է և հրավերով սահմանված տեխնիկական չափանիշներին և այդ ԳՈՍՏ-երին, բայց միևնույն է Պատվիրատուի կողմից այն չի ընդունվել սխալ մեկնաբանության պատճառով և Ընկերության հայտը մերժվել է:

Ելնելով վերը նշվածներից՝ Ընկերությունը խնդրել է որպես բողոքի պահանջ ընդունել նաև հրավերի 3-րդ չափաբաժնով «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու պահանջը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել նշված պահանջին համապատասխանող որոշում:

«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ»ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Սիտի սայնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սիտիսայնս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 25.01.2018թ. ներկայացրել է համանման բողոք, որով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով հայտարարված ընթացակարգին մասնակցել է «Սիտի սայնս» ՍՊԸ-ն և ճանաչվել է 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից 3-րդ չափաբաժնի մասով: Այնուհետև Պատվիրատուի կողմից մերժվել է 1-ին տեղ զբաղեցնող ընկերության՝ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սիտի սայնս» ՍՊԸ-ն: Նշված որոշման պատճառները ճշտելու նպատակով ընկերությունը դիմել է գնահատող հանձնաժողովի քարտուղարին, քանի որ չէր ստացել գնահատման նիստի

արձանագրությունները, որից հետո նոր ստացել է արձանագրությունների օրինակները: Հասկանալով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտի մերժման պատճառը՝ «Սիտի սայնս» ՍՊԸ-ին պարզ է դարձել նաև իր կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքը, քանի որ գնային առաջարկ ներկայացվել է 30գ./ք.մ. խտության բինտի հաշվարկով: Այնուհետև կազմակերպության ներկայացուցիչը կրկին կապվել է գնումների համակարգողի հետ, փորձել ստանալ պարզաբանումներ նշված չափաբաժնում ներառված սերտիֆիկատի վերաբերյալ, առաջարկել է ներկայացնել ապրանքի նմուշ, սակայն այդպես էլ արդյունքի չի հասել, և բաց է թողնվել տեխնկական բնութագրերի ներկայացման սահմանված ժամկետը: Կազմակերպությունը գտնում է, որ առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը ներկայացնելու դեպքում էլ միևնույն է Պատվիրատուն կմերժեր այն, քանի որ հրավերով սահմանվել է այլընտրանքային մեկնաբանություն պարունակող տեխնիկական բնութագրեր: Ի դեպ՝ Պատվիրատուն խախտել է մասնակցին ծանուցման ժամկետը: Մասնավորապես՝ «Սիտի սայնս» ՍՊԸ-ին ճանաչվել է հաղթող 28.12.2017թ. կայացած նիստին, հետևաբար նաև քարտուղարը պետք է ծանուցեր մասնակցին 29.12.2017թ, սակայն ծանուցումը կազմակերպությանը տրամադրվել է միայն 12.01.2018թ.: Համաձայն հրավերի պահանջների՝ հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր ծանուցել մասնակցին նիստի հաջորդ աշխատանքային օրը: Այսինքն՝ Պատվիրատուն ինքը խախտելով հրավերով սահմանված տեղեկատվության տրամադրման ժամկետը՝ մերժում է մասնակցի հայտը նման հիմնավորմամբ:

Կազմակերպությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 1-ին մասը:

Պատվիրատուն հրավերի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում սահմանել է հետևյալը. «Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մx14սմ չափերի ստերիլ բինտեր»: Բինտը լայնքից և երկարությունից բացի ունենում է այլ կարևոր ցուցանիշներ, որոնցից է խտության ցուցանիշը: Այս ցուցանիշը հստակ թվով սահմանելու փոխարեն Պատվիրատուն բնութագրում հղում է կատարել ГОСТ 1172-93 պահանջներին, որի 1.2.1 կետի համաձայն բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն՝ ГОСТ 9412-ի, կամ սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական

թանզիֆից: Դա նշանակում է, որ բինտի պատրաստման համար անհրաժեշտ թանզիֆի, հետևաբար նաև բինտի խտությունը կարող է լինել 28+/-2 մինչև 36+/-2:

Այս մեկնաբանությունից ելնելով «Սիտի սայնս» ՍՊԸ-ն հայտով նախատեսել է 30գ/ք.մ. խտության բինտ, սակայն պատվիրատուն իր գործողություններով («Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտի մերժմամբ)՝ ցույց է տվել իր կողմից 30գ/ք.մ խտության բինտը չընդունելու փաստացի մոտեցումը:

Ամփոփելով վերոհիշյալը՝ կազմակերպությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից սխալ բնութագրերով հրավեր հաստատելը հանգեցրել է հայտերի անհիմն մերժմանը՝ խախտելով մասնակիցների իրավունքները, ինչպես նաև ընթացակարգը մրցակցային, թափանցիկ և համաչափ կազմակերպելու վերաբերյալ Օրենքի սկզբունքը:

«Սիտի սայնս» ՍՊԸ-ն համանման բողոքով խնդրել է՝

1. Չեղյալ համարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ ընթացակարգի հրավերը հաստատելու մասին 22.11.2017թ. նիստի թիվ 2 որոշումը՝ 3-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև դրանից հետո նշված չափաբաժնի մասով հայտերի գնահատման վերաբերյալ կայացված բոլոր որոշումները:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 3-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Սիտի սայնս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է համանման բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/386 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից 25.11.2017թ. ժամը 20:03-ին պարզաբանում ներկայացնելու հարցում է իրականացվել Armeps համակարգում սահմանված ժամկետի խախտմամբ (25.11.2017թ. ժամը 11:00), բացի այդ հրավերի պահանջների համաձայն, պարզաբանում ներկայացնելու հարցումն անհրաժեշտ է ներկայացնել Armeps համակարգի շրջանակներում, այնինչ Ընկերության հարցումն իրականացվել է Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին նամակ ուղարկելու միջոցով, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 7 մասնակիցներ, այդ թվում՝ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և վերջինիս սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունում պարզվել է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված «բինտ ստերիլ» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում, ըստ ГОСТ-9412-ի՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լինի 36գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը՝ 5 %, այնինչ Ընկերությունը առաջարկվող բինտերի խտությունը նշել է 28+/-2 գ/քառ. մետր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը

և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատումն իրականացնելիս, գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.12.2017թ. թիվ 19/2806 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում՝ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել:

«Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/385 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.12.2017թ. 19/2806 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը և Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել է:

Մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մանսակից ճանաչել «Սիտի սայնս» ՍՊԸ-ին և նիստի արդյունքները հրապարակելուց հետո՝ 12.01.2018թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով վերջինիս սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Սահմանված ժամկետում «Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշում է կայացրել Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժել «Սիտի սայնս» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Լեյկոալեքս» և «Սիտի սայնս» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռք բերել հետևյալ ապրանքը.

Հ/հ	Ապրանքի CPV անվանում	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
3.	Վիրակապեր	Բինտ ստերիլ	Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մ.x14սմ չափերի ստերիլ բինտեր

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով՝ ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2	Բինտ ստերիլ 7մx14սմ	Բինտ ստերիլ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սիտի սայնս» ՍՊԸ-ն, որին 12.01.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սիտի սայնս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ կազմակերպության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի 22.01.2018թ. բողոքը, «Սիտի սայնս» ՍՊԸ-ի 25.01.2018թ. համանման բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/385 և ԴՎԱ/386 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը

և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար նախատեսվել է ձեռք բերել հետևյալ ապրանքը.

Հ/հ	Ապրանքի CPV անվանում	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
3.	Վիրակապեր	Բինտ ստերիլ	Բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին, 7մ.x14սմ չափերի ստերիլ բինտեր

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է

որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն, որպես Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

3	Վիրակապեր /բինտ ստերիլ/ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2	Բինտ ստերիլ 7մx14սմ	Բինտ ստերիլ 7մx14սմ, հատ, ըստ ГОСТ 1172-93՝ խտությունը 28+/-2

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության մեջ ամրագրվել է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված «ստերլ բինտ» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում՝ ГОСТ-9412-ի համաձայն՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լինի 36գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը 5%, այնինչ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող բինտերի խտությունը նշվում է 28+/-2 գ/քառ. մետր, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին (հիմք՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.12.2017թ. տրամադրված թիվ 19/2806 մասնագիտական եզրակացություն):

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ Ընկերությանն առաջարկվել է մեկօրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է պարզաբանում, որտեղ նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին, քանի որ ГОСТ 1172-93-ի 1.2.1 կետի համաձայն՝ բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի կամ սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական թանզիֆից, որը նշանակում է, որ

խտությունը կարող է լինել 28+/-2-ից մինչև 36+/-2: Ընդ որում Ընկերության կողմից նախապես գնային առաջարկով նշվել է տվյալ ապրանքատեսակի խտությունը և գնահատող հանձնաժողովը, բավարար գնահատելով Ընկերության հայտը, այն համարել է ընդունելի կամ համաձայնեցված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը նշված հիմքով գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժել է:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսվել է, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93 պահանջներին:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի www.sarm.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ ГОUS 1172-93-ը ներառված է ազգային ստանդարտների կատալոգի մեջ և համարվում է ակտիվ ստանդարտ: Նշված ստանդարտի 1.2 կետի 1.2.1 ենթակետի համաձայն՝ ***բինտերը պետք է պատրաստված լինեն բշժկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОUS 9412-ի*** կամ սպառողի հետ համաձայնեցված դեպքերում, այլ նորմատեխնիկական չափանիշներով բժշկական թանզիֆից:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի www.sarm.am պաշտոնական կայքում առկա տեղեկատվության համաձայն ***ГОUS 9412-ն նույնպես ներառված է ազգային ստանդարտների կատալոգի մեջ և համարվում է ակտիվ ստանդարտ***, որի 3.2 կետի 3.2.5 և 3.2.6 ենթակետերով սահմանվում է, որ բինտերի կտրման համար նախատեսված սպիտակեցված ***թանզիֆի խտությունը պետք է լինի 36 գ/քառ. մետր, իսկ թույլատրելի շեղումը կարող է լինել 5%:***

Այսպես, Խորհուրդն արձանագրում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին, քանի որ Ընկերության կողմից ներկայացված բինտի կտրման համար անհրաժեշտ թանզիֆի ***խտությունը կազմել է 28+/-2 գ.քառ. մետր, մինչդեռ հրավերով պահանջվել է 36 գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը՝ 5%:***

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, վերոհիշյալ հիմքով մերժելով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն բողոքի մեջ որպես բողոքի առարկա հղում է կատարել նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ օրենքին համապատասխան կազմված լինելու հարցին և գտել է, որ այն տարաբնույթ մեկնաբանությունների առիթ է տալիս՝ խախտելով ընթացակարգի մրցակցային, թափանցիկ և համաչափ կազմակերպված լինելու օրենքի պահանջը:

Այս տեսանկյունից Խորհուրդն անհրաժեշտ է գտնում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի հայտերը սահմանված ժամկետում և կարգով 30.11.2017թ. ժամը 11:00-ին բացվել են, ուստի Ընկերության կողմից Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, չեն կարող սույն բողոքով վիճարկվել և դառնալ քննարկման առարկա Խորհրդի կողմից:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից մատնանշված այն հանգամանքին, որ վերջինիս կողմից ի սկզբանե գնային առաջարկի մեջ մատնանշվել է առաջարկվող ապրանքի խտությունը և գնահատող հանձնաժողովը ի սկզբանե պետք է մերժեր Ընկերության հայտը, ապա «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն հայտի գնային առաջարկի մեջ «ապրանքի անվանումը» տողում նշել է «Վիրակապեր (բինտ ստերիլ) 7մx14սմ, հատ **ըստ՝ ГОСТ 1172-93**՝ խտությունը 28+/-2: Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտի 4 հավելվածով հայատարարել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նույն հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրին: Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար հիմք չէր կարող ունենալ Ընկերության գնային առաջարկը մերժելու համար, քանի որ Ընկերությունը գնային առաջարկի մեջ նշել է հրավերի

տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքի անվանումը, ինչպես նաև այն, որ այն համապատասխանում է ԳOUS 1172-93-ին և ներկայացրել հայտի վերը նշված հավելված 4-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը սահմանում է, որ հրավերը պետք է պարունակի գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ընթացակարգի հրավերով հայտերի Armeps համակարգի միջոցով բացման օր սահմանված է եղել 30.11.2017թ. ժամը 11:00-ն:

Հրավերի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ **համակարգի միջոցով** հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից պարզաբանում ստանալու վերաբերյալ հարցումը ներկայացվել է 25.11.2017թ. ժամը 20:02-ին, ընդ որում այն ներկայացվել է ոչ թե համակարգի միջոցով, այլ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին:

Անդրադառնալով «Սիտի սայնս» ՍՊԸ-ի բողոքին, Խորհուրդը գտնում է, որ այն անհիմն է վերոհիշյալ պատճառաբանություններով, հավելելով հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ նույն օրը կայացած նիստում հանձնաժողովի անդամներին ներկայացվել են մասնակիցների կողմից որպես շտկում ուղարկված փաստաթղթերը և հանձնաժողովը որոշել է դրանց քննարկման նկատակով նիստը շարունակել 12.01.2018թ.:

Նույն արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետում ամրագրվել է, որ 12.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստում փաստաթղթերի քննարկման արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է համապատասխան մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար, իսկ 1.3 ենթակետով որոշվել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը մերժել և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սիտի սայնս» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.01.2018թ. «Սիտի սայնս» ՍՊԸ-ին ծանուցել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, որոնք սակայն կազմակերպության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի բողոքը և «Սիտի սայնս» ՍՊԸ-ի համանման բողոքը անհիմն են և ենթակա են մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 22.01.2018թ. ներկայացված բողոքը և «Սիտի սայնս» ՍՊԸ-ի կողմից 25.01.2018թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**